



Ա Ր Ա Ր Ա Տ

թ. 11. Թ. — ՇՐՋԱՆ ԺԳ.

1880

ՏԱՐԻ ԺԳ. ՍԵՊՏԵՄ. 31.

ԱՅՍ ԲՇԽԱՐՀԻՍ ՄԷՋ ՄԵՐ ՈՒՆԵՑԱԾ ԿԵԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆ.

Քրիստոս մեր Տէրը, որոյ երկրաւոր կեանքը մեր կեանքի համար ամենա-
թանկագին և ամենալաւ հայելին է, որոյ մէջ մեզ ցոյց տուեց շատ պարզ
կերպով թէ, ինչ եմք մեք և ինչ պիտի լինինք: Իւր ծնած ժամից
սկսած մի անշուք մարում, մինչև իւր փառաւորութիւնը մեռելների մէջն
ու գերեզմանների վերայ, մեր գոյութեան ու կեանքի բոլոր բարոյական
հանգամանքների մասին մի սուրբ օրինակ է մեզ տալիս: Յետին վիճակի
մէջ ծնաւ նա, շատ հասարակ ծնողաց զաւակ եղաւ, այնպիսի մարդիկների,
որ ոչ յայտնի էին, և ոչ շատ ճանաչող ունէին. անշան ծնողաց
որդի եղաւ նորա համար, որ մեք միտք անենք թէ, ոչ մեծ տունից տեղից
լինենք, ոչ բարձր աստիճանի տէր լինենք, ոչ հարստութիւնը, և ոչ փա-
ռաւոր կերպով կեանք անց կացնենք և տալիս մարդիս այն աղետութիւնն,
որ Աստուծոյ առաջին զին ու նշանակութիւն ունի: Աղքատ մեռաւ նա,
մի օտար մարդ պէտք էր նորան գերեզմանի տեղը տար. այդ իմանալով,
պէտքէ մեք միտք անենք թէ, այս աշխարհումս ոչ թէ նորա համար է մեզ
կեանք տուած, նորա համար ենք ապրում, որ մեզ չմնալու հետներս չտա-
նելու, փշանալու երկրաւոր գանձեր հաւաքենք, որից մեր աչքը ամենեւին չէ
կշտանում և վրան ևս պէտքէ մնայ ու թողնենք, գնանք, չվայելելու ցաւը
սրտներումս այլ մեր խելքն ու միտքը այն աներեւոյթ գանձի հետ պէտքէ լի-
նի, որ երկնքում մեզ համար պէտքէ հաւաքենք, պատրաստենք, այն գանձն,
որ ոչ փշանալու է, ոչ ուրիշին է մնալու, ոչ ձեռքներիցս է գնալու, ոչ
աչքների վրան մնալու. այս այն գանձն է, որ միշտ մերն է ու կլինի և որ
յաւիտեան պէտքէ վայելենք երջանկացած հոգւով, անմահ կեանքով անանց
աշխարհում երանելեաց վիճակում: Սուրբ զիրքը ոչ մի տեղ չէ ասում

Թէ, Քրիստոս մեր Տէրը քանի գնաց, մեծացաւ երկրաւոր կայքով, աշխարհիս բարձր աստիճաններով, անցաւոր հարստութիւնով, այլ ասում թէ, քանի գնումէր, մեծանումէր, յառաջանումէր աստուածային բաների իմաստութիւնի ու հասկացողութիւնի կողմից այն աստուածային բաների մէջ, որ երկրիցս անշափ բարձր են, որչափ որ երկնքումը հաստատ մընային զին ու արժէք ունին, Իւր կեանքը մի գործաւորի իւր վիզն առած օրվայ մէջ անկու գործին, եթէ հեռուից հեռու մի կերպ նմանեցնել ուղենանք, պիտի ասենք որ, ամեն մի օրվայ մէջ կատարելու մի բարերար, մի մեծ գործ էր, որովհետեւ մարգիս բաղաւորեցնելու և երջանկացնելու անօրինակ, յաւիտենական մի գործ էր, որ պիտի կատարէր. նա փրկութիւն բերաւ մարդկային ազգին, նա ազատեց նոցա մոլորութիւնից ու մեղքից, նորա հոգին իւր օրերումն, իւր ժամանակին ապրող մարդիկների համար միայն չէր հոգս քաշում, այլև, իւր անշափ ողորմութիւնովն, հազարաւոր տարիներից յետոյ աշխարհք ծնելու մարդիկների համար ևս, Եւ ամենաբարձր, ամենամեծ բանն իւր մտքի մէջ բովանդակելուն հետք, իւր մարդկային եղբայրներից ամենայնախնին ևս չէր մոռանում, նա կողին ու կոյրին բժշկեց, կարօտութիւն ունեցողներին օգնելու, իւր ունեցածիցն, միշտ պատրաստ էր։ Այս ամեն բանն արաւ, այս ամեն բանն կղաւ նորա համար, որ մէք միտք անենք թէ, մեր իսկական օրական գործն էս այս անցաւոր աշխարհիս մէջը միայն մեր քաղաքական կացութեան, վիճակի գործերն ու զբաղմունքները չեն, կամ մերոնց բոլորովին անկարօտ ու լաւ աղբելու, մեր ու մեր տան անունը բարձրացնելու, լաւ աւուն հանելու հոգսը չէ, այլ ամեն մի առաքինութիւնի մէջ մեր կատարեալ լինելու ջանքն։ Մարդոյ մշտական բարոյն ու մնացական բարօրութեան համար մահուան առաջ գնաց, մեռնելը վիրն առաւ հնազանդութիւնովն Իւր Հօրն ու Աստուծոյն և լցուած Իւր հաստատ ու հաւատարիմ սիրովն իւր եղբայրների վերայ, արհամարհեց ամենադառն անարգանքն և խայտառակութիւնն, սրտի հոգու ամենաժանր ցաւերն, որ քաշումէր մարդիկների անշնորհակալութիւնից, ապիւրախտութիւնից, բարեկամի մատնութիւնից, նա արհամարհեց մարմնի ամենասաստիկ ցաւերն, որ բոլորովին անգութ կերպով պատճառուեալն Իւրեան չարաորդներն ու թշնամիներն։ Բայց փառաւոր էր վերջն մահուան ու գերեզմանների վերայ նորա արած յաղթութիւնն, նորա կանգնած յաղթանակը. այս ամենն ևս այն միտքն ունի, որ մէք հասկանանք թէ, մեր այս աշխարհս քաղն նորա համար չէ, որ օրերս լաւ, ուրախ, հանգիստ, բաղձաւոր անց կացնենք, կեանք վայելենք, ինչպէս որ պէտքէ, կամ թէ,—հեռու լինի մեզանից—, մարմնով ցաւ ու նեղութիւն քաշելն աստուածային բանի վերայ մեր ունեցած սէրը մեր սրտիցն կտրի բոլորովին։ Մահուան պատերազմից զէնը յաղթութեան պսակներ են մեզ սպասում, «Աստուծա որ», այսպէս է ասում Աստուծոյ խօսքը, «այս մեր նեղութիւնը, որ ժամանակաւոր ու թեթեւ է, մի յաւիտենական ու բոլորովին չափից դուրս փառքի

մեծութիւն կ'առաջացնի մեզ, որ այն երեւոյթած բաների վերայ չենք մտկոտալիս, չերեւցած բանին վերայ, ինչի որ, երեւցածը, ժամանակաւոր է, իսկ ինչ որ չէ երեւում, այն յաւիտենական է: (2. Կորնթ. 4. 17, 18):

Ի՞նչ բանի համար է աստուածութիւնը ինձ ոչինչից ստեղծել ու կեանք տուել, Արդեօք նորա՞ համար եմ ծնուած, որ առանց մի յայտնի և որոշ նպատակի ապրիմ օրօրոցից սկսած մինչև գերեզման մտնելս այսպէս, այնպէս, մի կեանք է, անց կացնելով, որ միայն օրերս դուրս գան, Հասակս առնելուց յետոյ, պէտքէ՞ գլուխս ցած ձգեմ, յետոյ ցած դնեմ ու պառկեմ, այլ ևս տեղիցս վեր չկենամ պարտիզի ծաղիկի նման, անտառի կաղնիի նման, մի օրվայ կեանք ունեցող ճանձի նման, անապատում բնակող առիւծի նման: Բայց ի՞նչպէս կարող եմ ես այդ դաղափարս համաձայնեցնել Աստուծոյ ունեցած կատարելութիւնների դաղափարի հետ: Ինչի՞ համար է եւրեմն այն կենդանի զգացումն, որ իմ մէջս կայ, թէ իմ հոգեւոյ գիտակցութիւն չունեցող աշխարհիս արարածներիցն ես շատ բարձր եմ: Ինչի՞ համար անուրանալի կերպով խելքս կտրուեմ, հասկանումեմ, որ իմ առաջին բարձր նպատակներ ունիմ, որոնց իմ կարճ կեանքիս մէջը հասնել չեմ կարող, մինչդեռ ուրիշ արարածներին միայն այն և այնքան յատկու թիւներն են տուած, որչափ որ պէտքէ միայն այս աշխարհիս մէջ իւրեանց գոյութիւնն ու կեանքը սենեմալու, պահպանելու համար, իւրեանց տառելիքն ու խմելիքը սնունդը ճարելու համար, կամ իւրեանց ցաներն ու իւրեանց կեանքին սպառնացող վտանգը իւրեանցից հեռացնելու համար:

Այսպէս մեր բանականութիւնը միայն արդէն մեզ ցոյց է տալիս մին մինի հակառակ միտքեր, որ մեր մէջը ծնումեն, ուղենալը, չուղենալը, և անդատճառ այդ ու այդպիսի մին մինի հակառակ միտքեր մեր գլխումը պէտք է անց կենան, երբ որ և եթէ որ մէք մեր աշխարհ գալու նպատակը մեր այս կեանքի նեղ սահման ունեցող ասպարիզի մէջ տեսնել ու փանել ուղենայինք:

Բայց մէք գիտենք, որ մարդս հոգի ունեցող արարած է, հոգի է, նորա մարմինը հոգու հագուստն է և օգնող գործիքն երկրաւոր բոների մէջ: Մեր մարմին, որ մեզ պատումէ, տարիներ վրան անց կենալով, երբ որ ժամանակն զալիս հասնումէ, թառամումէ, իսկ հոգին, մահի դուռը ընկած ժամանակին ևս, զգումէ, որ դարձեալ նոյնն է, ինչ որ էր ինքն իրան ճանաչած օրից: Մարմինը, ծանրացած, թուլացած ընկնում, պառկում, գետին, ինչպէս որ գետնիցն էր առնուել, հոգին այս աշխարհիս մէջ ոչ մի երկրաւոր բանի մէջ հանգստութիւն չէ գտնում, այլ գերեզմանից բարձր ու դուրս է ձգտում, դիմում դէպի յաւիտենականութիւն:

Ուրեմն հոգին է մարդիս իսկական մնացական (մնացող, մնայիւն) մասն, մարմինը չէ. յաւիտենականն է նորա կեանքն, ոչ թէ անցաւորն, բուն աստուածայինն է, աստուածայինից է յառաջ եկած, ոչ թէ երկրաւորից: Մարդիս մէջ եղած հոգեղէնն ու աստուածայինն դէպի աստուածայինն է

դնում, իսկ երկրաւորը՝ հողածինը դարձեալ հողն է մտնում:

Բայց ի՞նչպէս կարող եմ իմանալ թէ, աստուածութիւնն մահուան ժամից յետոյ դէնը ի՞նչ նպատակի համար է ինձ կանչում, — Այնքան տեղ աչքս չէ կտրում, որ պարզ տեսնեի, այնքան տեղ խելքս չէ հասնում, որ ասեի. բայց իմ մէջս զարմանալի կերպով հնչումն բնութեան, բանականութեան և յայտնութեան ձայներն և զգումն, թէ ի՞նչ պէտք է ինիմ, ի՞նչ յոյսեր պէտք է ունենամ:

Ի՞նչ պիտի լինին ապառաժի վըայի մամուռն, լեռների վըայի կաղնիներն, երկների բարձր տեղերը թռչող արծիւն, — Ստեղծողի իւրեանց տուած բնական ուժերովն ինչ որ են ու կարող են լինել, այն կլինին, խօսքս այն է թէ, կլինին մամուռ, կաղնի, արծիւ, ոչ թէ ուրիշ բան: Կատարելագործվել, և այդպէսով իւրեանց գոյութիւնն ու կեանքը բարձրացնել ու կատարելութեան հասնել նոցա ոչ մի ժամանակ կարելի չէ: Բայց մարդկային հոգին յայտնի և անուրանալի կերպով այնպիսի մի գոյութիւն է իւրեան ցոյց տալիս, որն իրան կատարելագործելովն անդադար և միշտ, աստուածութեան է մօտենում. նորա մէջը կայ ու գործում է մի ոյժ, մի զօրութիւն, որի կեանքն ու գործքը իրանից ցած ելող կեանք ունեցող ու գործող ուժերից բարձր է ու անկախ. դա ճանաչողական ու մտածողական այնպիսի մի զօրութիւն է, որոյ մէջ տիեզերքի բոլոր փառքը, մեծութիւնն ու զարմանալի բարեփայլելութիւնը միշտ աւելի երջանկացնող և աւելի անսահման կերպով է յայտնվում: Այս է այն գաղտնի զգացումն մեր մէջը. այս է և այս միտքն ունի փառաւորուած Փրկչի պատուէրն թէ, Կարգի պէտք է յայտնուի և Կարգի պէտք է:

Հիմա աստուածանուն անելու ու հոգովն աստուածանուն դառնալու անբարարութիւնը յարմարեմքս խնայեմ. ահա այս է իմ նպատակս, այս է իմ կեանքիս նպատակն: Այս իմ անելու գործիս, այս իմ ունենալու իսկական ջանքիս ու հոգսիս ճշմարիտ լինելը, որ ինձանից ծածկած բան էր և որոյ վըայի քօղը հանցի, բացից Քրիստոս իմ Տէրս և, որ իմ բանականութիւնս ևս հաստատում է, իրօք այնպէս լինելը, իմ այս աշխարհիս մէջ ունեցած կեանքովս ևս առաւել պարզվում է իմ առաջին, Ամենայն բան զրգում է, որ մեր բանական հոգին մարմնաւոր բանի վըայ իւր իշխանութիւնը բանի գնայ տարածի, մեծացնի. ամեն բան մղում է, որ մեր բանական հոգին մոլորութիւնի ու մեղքի կապերից ազատվի: Այս կեանքս բանական հոգու համար միայն մի դաստիարակութիւն է իւր մեծ կոչման համար. այս կրթութիւնը այս կեանքումս, իւր բոլորովին կատարելութեան աստիճանին չէ հասնում, չէ վերջանում. մեր կեանքի յետմայ շարունակութիւնն ևս յառաջ է տանում միշտ և անդադար:

Ամենայն բան զրգում է, որ մարդիս բանական հոգին իւր ճանաչողական կարողութիւնն (խելքի ոյժն) ընդարձակի: Մարդս այն պատճառով տկար ու անպատասխար ծնուեցաւ, որ, իւր բանական հոգու ոյժերը բանեցնե-

լով իւր կեանքի պահպանութեանը համար զարգացնի։ Անդանին իւր մօրը փորկց արդէն ծնումէ բնական ղէքերով, իրան պէտք հագուստով, և իրան հարկաւոր ուտելիքն ու խմելիքը բնութիւնն ինքն պատրաստ նորա առաջն է հանում, զնում ձրիապէս և ինքնաբերաբար։ Բայց այս ևս կայ, որ աշխարհիս ստեղծուելուցը շատ հազար տարիներ են անց կացել։ Իսկ անբան կենդանիները ճանաչողական կարողութիւնի կողմէն մի գծի շտի ևս յառաջ չեն գնացել, ինչ որ կան, դարձեալ այն կենդանիներն են։ Միայն մարդս ամենայն դժուարութիւններ քաշելով, ձեռքից թան գալու և թան հասկանալու կողմանէ, կարողանալու և հասկանալու բարձր աստիճաններին մեծ նեղութիւններով, իբր մագլցելով, բարձրացաւ։ Հասաւ։ Սկիզբումն նա փոսերումն էր բնակվում, բայց այժմ հանդիստ ապահով, իւր խելքովն շինած բնակարանների մէջ։ Սկիզբումն նորա ձեռքերն էին, բիշ յետոյ, փայտից ու քարից էին նորա գործիքներն, որոնցմով նա այս, այն բանն անումէր, բայց յետոյ մտաւ նա կէկրի խոր տեղերը, նորա մէջից, իբր նորա փորկց, աղիքներից քաշեց, հանեց ու դուրս բերեց տեսակ տեսակ մետաղներ, որ նորանցից վտանգին յաղթելու համար սուր շինի ու երկիրը (հողը) մըշտելու համար, արօր։ Սկիզբները նա իւր բնակուած պտիկ տեղին էր կապուած, իւր տեղից հեռու գնալու կարողութիւնը չունէր, բայց յետոյ ուրիշ տեղեր, հեռու տեղեր, աշխարհիս ուրիշ կողմերը գնաց, մանկեալ, իւր շինացած լեզուները սովորեցաւ և հաղորդակցութիւն։ Եւրաբերութիւն ունեցաւ ուրիշների հետ, նոցա միտքերն ինքն հասկանալ կարողացաւ և իւր միտքներն ուրիշներին հասկացնելու, իմացնելու։ Եւտոյ անմահ ու համարձակ ահագին ծովերը մտաւ, զնաց անց կացաւ աշխարհիս մի մասից միւս մասը, և գրի նշաններով ահագին տարածութիւն ունեցող հեռու երկիրների հետ խօսեց, որ տեղ որ ամենեւին չէր գնացել։ Սկիզբները ամպը որ գոռումէր, զոգումէր երկիւղից, զարմանում, ալշած կանգնում, մնումէր երկնքի լուսաւորների վերայ նայելով։ Եւտոյ նորա մէջը ծնաւ այն միտքը թէ Աստուած կայ, կամ Աստուած պէտքէ լինի, աղօթք, երկրպագութիւն էր անում, որոտումին, կրակին, փայլող աստղերին, վերջապէս հասկացաւ, որ սրբա ևս իսկ Աստուած չեն, այլ Նորա արարածներն, սկսեց աղօթք ու երկրպագութիւն անել աներեւութին, Աստուծոյ—Եւտոյ, Յիսուսի Քրիստոսի լոյսը իրան ևս լուսաւորեց, և Աստուծոյ թագաւորութիւնն երկրիս վերայ սկսեց իսկ իւր գոյութիւնն ունենալ ու իրօք հաստատուիլ։

Այսպէս մարդիս բանական հոգին, կեանքի կարիքներից զրգուելով ու մղվելով, անդադար յառաջ գնաց, միշտ մի գիւտից դէպի միւսը, մի բանի խելքը հասցնելուցը դէպի միւսը, Ինչ որ այսօր մի խաղացող երեխայն դիտէ, հին ժամանակներումը շատ խելօք և գիտուն մարդի համար զարմանալի մի բան կլինէր, Հարիւրաւոր տարիներ անց կենալուց Եւտոյ ի՞նչ պէտքէ լինի մարդկոյին աղգը, որ քանի գնումէ, միշտ յա-

աաջանումէ, Աստուծոյ արարածները քննելու և նոցա խելք հասցնելու կողմանէ: Արդէն այսօր ևս դիտենք մեք անշափ տիեզերքը, նորա շարժապարտը, կամ տարածութիւնը և մեզ ամենից մօտիկ երկնային մարմինների ճանապարհներն ու ընթացքը, դաշտերն ու սարերը և լուսնի արեգակի որպէս և հեռաւոր երկիրների լուսի հագուստներն, լուսի հագուստներն լուսնի քառօրյանն են արդեօք, իսկ արեգակի՞ ինչերն են որպէս և հեռաւոր երկիրների, դիտենք օդի, լուսի և բնութեան անժիւ, անհամար գործի ոյժն ու զօրութիւնը, Բայց այն ևս ասենք, որ հոգեղէն մարդիս ամենից իմաստունի հասկացածն անգամ, տիեզերքի Ուլկիա նոսից հաղիւ մի կաթիլի չափ բան է, Բանական հոգու աստուածաման լինելը մարդիս նպատակն է:

Այդ բանին, այդտեղ է տանում մեզ աշխարհիս բոլոր կարգադրութիւնը, ամենայն բան տանումէ մեզ հասցնում այն տեղը, որ մեք մեր էշխան-էշխան, մեր զբոս-էշխան արածէն, զգայ-էշխան արածէն, ամենայն բան տանումէ մեզ այն տեղը, որ զգանք մեր բարձր արժանաւորութիւնն, որ պատկեր ու նմանութիւն ենք Աստուծոյ, Բանական հոգու և մարմնոյ ցանկութիւնների կամքը մին մինի հետ միշտ հակառակութիւնի մէջ են: Մեր մէջ երկու տեսակ օրէնք կայ, Մարմնից յառաջ են դալիս մեղքի ամենայն հակումները, — հպարտութիւնի, նախանձիւ, վերէփխնդրութիւնի, անառակութիւնի, բայց հոգուց յառաջանումէ փափազն սուրբ, աստուածային ու մնային բաների, Մարդս զուր է երկրաւոր բաների մէջ իւր գոհ ապրելն ու ամեն բանից աչքը կտանալն դրսեւում, միշտ երկրաւոր բանն մարդիս իրոնից յետ է հրում, ու կարծես, այդպէս անելով, հասկացնում նորան թէ, խելքդ գլուխդ հաւաքիր այն բանն զուրսը մի՛ պտտիր, ինչ որ քո մէջդ պէտքէ գտնես, ինչ ես պատէ պատ ընկնում, Զուր է բանական հոգին իւր արժանաւորութիւնը մոռանում, և իւր բաղդաւորութիւնը երկրաւոր կեանքի պարզեանից պահանջում, Պեղեցկութիւնն ու յոյժ առն է կենում, գնում, փառքը նահանգում կորչում, մարմնասիրութիւնի ետեւից, գալիս է թշուառութիւնը, փողն ու ինչքը մեր ձեռքից դնում են ձեռքից անց կենում, շատ մարդի ձեռք ընկնում, հայր, մայր, մարդ, կնիկ, զաւակներ մեռնում են, մի բան չէ մնում, մի բան հաստատ ու մնացական մի բաղդաւորութիւն չէ բերում մարդիս, որ ասի թէ, արդէն ամեն բանից գոհ եմ, կուշտ եմ, այլ ևս ինձ ոչ մի բան պէտք չէ, այլ ևս ոչ մի բանի չեմ ցանկանում, ոչ մի բանի կարօտ չեմ, ամէն ուղածս, ցանկածացս, ունեցայ, կատարուեցաւ, այլ ևս բան չմնայ ինձ ցանկալու: Ընդհակառակն մարդս կարօտ է մնում շատ բանից, և ամեն բան ստիպումէ, մղումէ մեզ մեր տեսած երկրաւորը թողած դէպի անհրեղթ երկնայինը աչքներս դարձնել: Մեղքը, հոգու գերութիւն է, առաքինութիւնը, հոգու ազատութիւն: Մեղքը — մարմնի իշխելն, թաղաւորաւորն է մեր դիւին, իսկ առաքինութիւնն այն բանն է, որ աստուար

ծայրինը մեր մէջ յաղթութիւն է անում, յաղթող է հանդիսանում, Իրաւ է հոգին շատ ու շատ անգամ մոռանումէ, որ ինքը պէտքէ իշխանութիւն բանացնողը լինի իւր հողեղէն բնութիւնից յառաջ եկած ցանկութիւնների վերայ, շատ ու շատ անգամ թող ու անցոր է շարժում փորձութեան բոպէնում, նոցա ընդդէմ կենալու. բայց մեր գրկին եկած բաների ու մեր խղճմտանքի մեծ վարժատունը մեր բանական հոգուն հանգստութիւն չէ տալիս: Միշտ ու անդադոր մղումեն նորան դէպի պատերազմ, միշտ ու անդադար նորա աչքին է ընկնում այն հեռաւոր նպատակը, այն սուրբ, այն լուսաւոր նպատակը, որ իւր սուրբ լուսովը նորա առաջ լուսաւորվումէ և քարշում նորան դէպի ինքն, որ ամենայն նեղութիւններով հասնելու փախազի ու ձգտի:

Երկու մեծ վարժապետներ է զրկում մեզ Նախախնամութիւնը, որ աստուածայինը սովորեցնեն, աստուածային բանի մէջ կրթեն ու դաս տնարակեն, միւր, մեր իշխմանն է, որ մեր որդի մեջն է, միւր, վերջէն, մեր գլխին էլ՝ Բնութիւնը, որ մեզնէն որդւն է: Նոքա երբեք պարագայ չեն կենում, միշտ բանի վերայ են, ներսից ու դուրսից, և նոցա նպատակը ջոկ ջոկ բաներ չեն, այլ մի և նոյնն է. նոքա մին մինի օտար չեն, այլ շատ մօտիկ, միշտ համաձայն են միմեքմեային, և այնպէս են գործ տեսնում. մի նպատակ ունին երկուսն ևս, լճէ և գործնները մին չեն, ոչ մի ժամանակ միմեքմեային հակառակ բան չեն անում, միմեանց ընդդէմ գործ չեն բռնում:

Խղճմտանքը սաստիկ կերպով զգալ է տալիս մեզ, որ վերևում Աստուած կայ, Նա է ամենայն բան կարգադրում, առաջնորդում, ամեն բան Նորա ձեռքին է. իսկ մեր վիճակն ու գլխին եկած բաներն, փորձանքը, փորձությունները, ձախորդությունները, անբաղգուն թիւններն յայտնվերպով մեզ ցոյց են տալիս Աստուծոյ ամենակարող զորութեան դրօժերի մէջ Նորա առաջնորդութիւնը, ամենայն բան Նորա ձեռքումն լինելը, Խղճմտանքը տալիս է մեզ այն օրէնքն, որով մեք շարն ու բարին մին մինից ջոկումենք ու ծանաչում, իսկ մեր գլխին եկածները կատարումեն մեր վերայ իւրեանց վճիռը, կամ մեր բարօրութեան, կամ անբաղգունութեան համար, մեզ օրհնենք, կամ պատիժ լինելով, Խղճմտանքը բարձր ձայնով ասումէ մեզ թէ, այ մահկանացու մարդ, մարմնիդ վայելչու թիւնները չեն քեզ համար ամենագլխաւոր բանն, այլ առաքինութիւնն ու արդարութիւնը. իսկ մեր գլխին եկած բաները, մեզ ցաւեր, նեղութիւններ քաշել տալով, մեզ հասկացնումեն, որ ամենայն երկրաւոր, աշխարհային վայելչութիւն փութ է, անհաստատ ու անցաւոր, Խղճմտանքը ցոյց է տալի մեզ, որ մեր բանական հոգեւոր կատարելագործութիւնը մեր նպատակն է, որին պէտք է աշխատենք հասնելու. իսկ մեր գլխին եկած բաները բաց են անում մեր առաջ աստուածային լայն և ընդարձակ ծանապարհ կատարելագործվելու. Խղճմտանքն ասումէ. դու անմահ վիճակի ես սահմանուած, իսկ մեր գլխին եկած բաները հրամայումեն մահուանը, որ մեր մարմնի մահկանացու մասն փշաքնի, ոռնաքնի.

Երկուսն ևս, թէ փորձութիւններն, և թէ խղճմտանքը, երբէք միմեանց չեն հակառակում: Ի՞նչպէս կարող էր լինել, որ յաւիտենական իմաստութեան կարգադրութիւնի մէջ հակառակութիւն տեսնվէր: Աստուծոյ կարգադրութեան մէջ երկու մին մինի հակառակ բան գտնուէր: Քրիստոս մեր Տիրոջ մեզ փրկելու գործի մէջ վե՛սմ բանն այն է, որ Նա խղճմտանքի ու փորձանքների միմեանց հետ համաձայն միեւնոյն գործը կատարելը շատ պարզ կերպով յայտնեց մարդկային ազգին: Նորա մէջ սովորեցրածն այն էր, ինչ որ աստուածութիւնը մեր խղճմտանքի մէջը զրել է իբրեւ հաստատու սուրբ պահելու օրէնք: Իսկ ինչ որ Իւր կեանքի մէջն արաւ ու կատարեց, իբրեւ իւր անելու գործերն, նոյնպէս և ինչ որ Նա քաջեց, Նորա հնազանդելն էր անօրէնութեան Իւր Հօր, որ երկնքումն է: Ուրեմն չէ կարելի մեզ, միայն Քրիստոսի տուած ուսումն, մեզ համար հարկաւոր տեսնել, այլեւ միշտ Նորա Իւր կեանքումն մեզ տուած օրինակն ևս, մեր զխի՛ն եկած ամեն տեսակ փորձանքների մէջ, մեր աչքի առաջին պէտքէ ունենանք իբրեւ հետեւելու օրինակ, թէ Նորա տուած ուսումից չճգնվու: Թէ Նորա մեզ տուած օրինակին հարազատ ու հաւատարիմ կերպով հետեւելու համար: Քրիստոսի մի անձնաւորութեան մէջ, խղճմտանքն ու փորձութիւնն կատարեալ համաձայնութեան մէջ լինելով, յառաջացաւ իմաստութեան և առաքինութեան մեզ հետեւելու օրինակն և կատարուեցաւ մոլորութեան ու մեղքի վերայ Նորա մահկանացու մարդկային բնութեան այն անմահ ու յաւիտենական յաղթութիւնն, որ սկիզբն դառաւ աշխարհի փրկութեան:

Եթէ որ Աստուծոյ մեզ դաստիարակելու գործին մարդկային մի թոյլ օրինակ տալու լինիմ, թէ ի՛նչ կերպ բան է և ինչի՛ նմանեցնենք, որ հասկանանք, ուրիշ աւելի յարմարաւոր նմանութիւն բերիլ չեմ կարողանալ քան թէ ինչի որ նմանացնումէր ինքն Փրկիչն, որ է, Տօր վարմունքը իւր զաւակների հետ բնաւանկեան կեանքում: Իմաստուն հայրը ցանկանումէ այնպէս մեծացնել իւր որդուն, որ ինչքան կարելի է, դիտադանց մի զաւակ դառնայ: Նա զդումէ, որ վարժատան ուսումով և իւր կոչման համար հարկաւոր գիտութիւններով, որ միջոց տուեց իւր որդուն ստանալու, դեռ ևս նորա կեանքի ամեն բաղդաւորութիւններն պատրաստած չեղաւ: Գլխաւոր բանը նորա հոգին բարոյապէս ազնուացնելն է: Ե. յի մշտքով Նա սորվեցնումէ որդուն հարկաւորը, խրատներ տալիս, պարտականութիւններն առաջին դնում, յորդորում, զգուշացնում այս, այն բանից: Նա իւր որդու դեռ ևս անշարհաս ու անփորձ տարիներումն նորա համար կենդանի ու խօսուն խղճմտանք է դառնում: Բայց շատ չէ անց կենում, որ խելքը հասնումէ: Թէ տուած ամենազգու բարոյական ուսումն ևս հերիք չէ իւր զաւակի բնաւորութիւնն ազնուայնելու համար: Ըաւ հասկանումէ, որ հայր ասածդ իւր զաւակի փոքր ժամանակին նորա վիճակի ու ինչի՛ն էր իւր կարողութեան չափ անօրինոյն, կարգադրողն պէտք է լինի, տանելով նորան իւր առաջնորդութիւնովն:

այն ճանապարհով, որով պէտք է ման գայ և որից պէտքէ դուրս չդաշ։ Ուրեմն պէտք է հայրն որդուն, վատի համար պատժի, լաւի համար պարգև տայ ու օրհնի, պէտքէ ինքն իրրեւ հայր իւր իսկ սիրովն զէպի աստուածայնը, որդու թարմ ու մատաղ սիրան ու հոգին տաքտովի ինքն ամենայն անարխնութիւններէ մէջ օրինակ լինի նորան ու օրինակ տայ, ինքը պէտքէ բաղդաւորութիւնի մէջ եղած ժամանակն իւր չափը ճանաչի, կամ ինքն իրան չկորցնի, անբաղդութեան մէջն ևս մեծահոգի, տանող, համբերող լինի, առանց փոխուելու, ուրիշ մարդ գառնալու։ Այսպէս նա իրրեւ հայր իւր որդու, իրրեւ վարժապետ, դաստիարակ իւր աշակերտի, կարող ենք ասել, նոյնպէս նորա, իրան հեռեւելու, լաւ օրինակն կ'լինի, նա իւր որդու հոգու մէջը կ'դնի Քրիստոսի մեր տիրոջ փրկագործութեան հիմն, որոյ վերայ շինութիւնն յառաջ պէտքէ տանեն ժամանակով խղճմտանքը, մեր վիճակն ու մեր զխիւն գալու բաները։

Ո՛հ, որչափ շնորհակալ եմ ես իմ մանկութեանս դաստիարակներից, որ նոքա վաղօրօք արդէն զրած են իմ սրտիս մէջ այս պատումկան հիմն իմ երջանկութեան։ Ես սրտանց շնորհակալ եմ նոցա ու երբէք չեմ մոռանալ, թէ եւ նոքա արդէն վաղուց հոգի տակոււմը պատկած են և իւրեանց զերեղմանի վերայ շատոնց կանաչ խոտ է դուրս եկած ու ծածկած նոցա։ Ահա ժամանակն, այժմ ևս անց կացած չէ, որ աշխարհիս երեսին առանց ուրիշի, ինքս իմ զխիւս տէրը պիտի լինիմ, ու իմ փեկքովս բուն պէտք է բռնեմ գործ տեսնեմ, ապրիմ, պատիւ անուն ունենամ, Այժմ ևս շատ անգամ մտքիցս անց է կենում թէ ինչպէս դեռ ևս շատ տեղ պէտք էին ինձ նոցա խելքը, խրատը, խորհուրդը, փորձաութիւնը, ինչպէս կարող էին ինձ զգուշացնել այս, այն տեղ, այս ու այն գործի մէջ, այս ու այն մարդից, բայց իմ տես ու ճանաչ, մինչև անգամ ինձ բարեկամ մարդիկներէ մեծ մասը, իւրեանց անձն ու շահ միայն միտք անողներն ինձ վերայ մի սառն տէքով մտիկ տալով, մօտիցս անց են կենում, գնում իւրեանց բանին։ Ո՛ւմ վերայ, ինչի՞ վերայ յոյսս դնեմ, երբ որ, մարդ ենք, բանս ձախ գնալու լինի, ընկնելու լինիմ, ո՞վ կ'լինի մօթ գիշերվայ մէջ ինձ լոյս անող, լոյս տուող աստղս, որ իմ ճանապարհս ցոյց տայ։

Ո՛վ իմ Աստուած, Գու ես միայն, որ ինձ չես թողնում, Գու ես միայն, որ այժմ ևս միշտ պատուիրում ես իրկու հրեշտակների, որ ինձ զգուշացնելով ու մխիթարելով, այս աշխարհիս կեանքիս մէջն ինձ իմ ճանապարհս ցոյց տան ու միշտ իմ հետո ման գան, այս իրկու հրեշտակների մինն իմ խղճմտանքս է, որ իմ սրտումս է, միւսն այն սուրբ նպատակ ունեցող բաներն, այն ձախ բաներն, որ իմ կեանքումս ինձ պատահում են, որ անփորձ շինամ աշխարհումս։ Ո՛վ իմ Աստուած, թող, որ ես նոցա ձայնին ահանջ դնեմ և սովորեցնուր ինձ, որ հասկանամ, թէ նորանցով ի՞նչ ես կամենում ինձ խմցնել, կամ ինչ է քո կամքդ, որ նորանցով ինձ հասկացնումե՞ս։

Աշխարհիս Փրկչի, Երեսնի Քրիստոսի խօսքեր, ու գործեր, դուք ևս

մի կողմից ինձ զատախարակող ու փրկող զո՞ք ու զօրո՞թիս զարձէք իմ համար, Միշտ ձեր մէջ պէտքէ պտտեմ ինձ հարկաւոր ուսումն ու կըրթնեմ իմ անմահ հօգիս կատարելագործելու համար, Եթէ որ այս կեանքիս մէջն ու աշխարհումս չկարողանամ՝ ևս իմ նպատակիս հասնելու, հաստատ յուսով եմ գոնէ այնտեղ հնձել զօրո՞թիւնով, ինչ որ այստեղ տկարութիւնով սերմանու եց,

(Թարգմ.)

Գր. Եղ. Աղ.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ ՔԱՂՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ

(Արարատ 1880, օգոստոս),

Ը.

Այն գործը որ ինչպէս արդարեւ իմ Ժողովուրդիս Գր. Եղ. Աղ.

Կամենումնք համառօտապէս նկարագրել Տարրական դպրոցներին վերաբերեալ մի ընդհանուր պատկեր, հետեւելով նորագոյն մանկավարժութեան իրաւացի պահանջներին, Հարկաւոր է այս մասին խօսել, որովհետեւ վերջին ժամանակներումս Հայ-լրագրութեան մէջ Տարրական դպրոցներին վերաբերեալ յօդուածներից երևումէ, որ մեր յօդուածագիր մանկավարժները իւրեանց աչքի առաջ չունեն ոչ մի հիմնաւոր փաստ, որով կարողանային ապացուցանել թէ ի՞նչ է արդեօք հարկաւոր ուսուցանել տարրական դպրոցների մէջ, և թէ ի՞նչի այդ իրաւանց առաջարկած նիւթերը պէտքէ սովորեցնեն և ոչ ուրիշ նիւթեր, Արդարեւ եթէ կամենումն տարրական դպրոցների մասին մի ընդհանուր ծրագիր առաջարկել, պէտքէ որ այդ ծրագիրը հիմնված լինի նախ սովորող մանուկի բնաւորութեան վերայ, երկրորդ այն պահանջների վերայ, որ կեանքը, կամ ամենօրեայ գործնական պահանջները ստիպումն մեզ դիտենալ,

Այս պահանջներն են ահա, որոնց մասին մանկավարժները տակաւին մի ընդհանուր համաձայնութեան չեն հասել, մանաւանդ մեր հայ-մանկավարժները, Առաջին հարցը սա է, թէ արդեօք արդարեւ Ինչպէս արդարեւ, Այս հարցը դպրոցի գործնական կողմին է վերաբերվում, սորանով վճռվումէ դպրոցի նախագիծը, Մանկավարժների կարծիքները այս հարցի վերայ շատ տարբեր են, Ոմանք ասումեն. — պէտքէ ուսուցանել այն, ինչ որ ժողովուրդն է կամենում, Բայց թէ ի՞նչ է կամենում ժողովուրդը, ոյս հարցին ոչ որ պատասխան չէ տալիս, Մեկն ասումէ ժողովուրդը կամենումէ ժամագիրք և սաղմոս ուսուցանել, միւսն ասումէ նրան հարկաւոր է գիւղատնտեսութիւն, երրորդը թէ նորան հարկաւոր է արհեստ, չորրորդը պնդումէ թէ նա պէտքէ գրագիտութիւն և հաշիւ գիտենայ և այլն, Սոցա դեմ ուրիշները պատասխանումեն, ժողովուրդը տղէտ է, յիմար է, նա մարդիս բնաւորութիւնը հոգեբանօրէն չէ իմաստասիրել, Ուստի և չէ կարող վճռել թէ ի՞նչ է հարկաւոր սովորող մանու-